կ՚լինին իրեն և այլ․ ուստի կրկին առաջարկուեցաւ բաժակ․ Այս ՚ի լրումն ուրախութեան այս հոգեպարար հանդիսի Վեհափառ Հայրապետն մեր ոտք ելաւ, և բազկատարած ՚ի բոլոր սրտէ հաստատութիւն խնդրեց յԱստուծոյ Արարատեան մայր Աթոռոյս սուրբ Էջմիածնի, օրհնեց զքրիստոսազօր Կայսրն ամենայն Ռուսաց, օրհնեց զմիաբանութիւն ուխտի, օրհնեց հայոց ազգիս լրութիւնը, որ ընդ ոլորտս տիեզերաց, և օրհնելով միանգամայն սեղանը և իւր սեղանակիցք՝ ելաւ ՚ի Վեհարան։

Փառաւոր էր նոյնպէս և գիշերային հանդէսը ՚ի պատիւ Տարեդարձի օծման սուրբ Հայրապետին, որ կատարեցաւ հրախաղութեամբ և լուսավառութեամբ և բաւական բազմութեամբ ժողովրդոց ՚ի գաւթի կաթուղիկոսարանին։

Իսկ ամսոյս երկուսին կատարեցաւ Տօն Կաթուղիկէ եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի հոգևոր հանդիսիւ ՚ի ցնծութիւն ուխտի մանկանց եկեղեցւոյ․ միօրինակ շքեղութեամբ, յորում Պատարագիչն էր Տեղապահ Վեհափառ Կաթուղիկոսի Սըրբազան Սարգիս Արքեպիսկոպոսն, որ ըստ պատշաճի աւուրն խօսեցաւ քարոզ ՚ի տաճարին գիշերային ժամերգութեան աւարտմանը․ կարգացուեցան նոյնպէս ճառք թէ՛ ՚ի մաղթանքին և թէ՛ հացկերութի ՚ի Վեհարանին․ այս երկու եկեղեցական հանդէսներու մէջ խօսեցած ճառերը հետզհետէ կ՚դնենք ՚ի կարգս բանասիրականին։

## ԴԱՏՄԱԿԱՆ

### ԱՐԱՐԱՏ ՆԱՀԱՆԳ

(Շարունակութիւն 1)

Այս ևս գիտել պէտքէ․ որ Ասորւոց նահապետի անունն էլ Արամ լինելով՝ որ Սեմայ որդին էր Իսրայելացիք Ասորւոց ազգը այս անուամբ կը կոչէին, որու համար Մովսէս ուրիշ ազգաց չուզեց պատճառ տալ, և այնպէս մեր ազգը Արամայ անունովը կոչել․ որ Ասորւոց ազգը հասկանան․ և այս երկու ազգաց նախնիքը մէկ մէկու շփոթեն․ որոց ազգաբանութիւնները որո՛շ որոշ գրուած են սուրբ գրոց մէջ․ ՚ի Սեմայ և ՚ի Յաբեթէ, ուստի և Հայաստան աշխարհը մեր արքայանիստ նահանգի անուամբը Արարատ կոչեց Ասորւոց ազգէն որոշելու համար։

Այլ թէ Արարատ անունը ուրիշ ազգաց մատենագիրք ևս ըստ շաւղաց սուրբ գրոց Հայաստան աշխարհքին կ՚տան, բայց ազգային մատենագիրք Արարատեան նահանգին կ՚սեպհականեն զայն, որոյ գլխաւոր տեղին այս անունով նորա դաշտավայրն է, Արարատեան դաշտ կոչուած, յորմէ և նահանգն․ մեծին հայոց հնգետասան աշխարհաց մէկը զոր Խորենացին իր աշխարհագրութեան մէջ փոքր աշխարհք կը կոչէ․ (և յետինք նահանգ) և նոյնը գաւառներու կ՚բաժանէ այս դասակարգութեամբ։

1․ Ծնն․ Ը․

ա. Բասէն կամ բասեան.
բ. Գաբեղեանք.
գ. Աբեղեանք.
դ. Հաւունիք.
ե. Արշարունիք.
զ. Բագրեւանդ.
է. Ծաղկոտն.
ը. Շիրակ.
թ. Վանանդ.
ժ. Արագածոտն.
ժա. Մասեացոտն.
ժբ. Ճակատք.
ժգ. Կոգովիտ կամ Կոգ.
ժդ. Աշոցք.
ժե. Նիգ կամ Նգատուն.
ժզ. Կոտայք.
ժէ. Մազազ.
ժը. Վարաժնունիք կամ Ծաղկոտն.
ժթ. Ոստան.
ի. Գինւոյ դաշտն.

Մինչ որ Հայաստանի հնութիւնները պիտի ստորագրենք Արարատ ամուգրին մէջ, որ կ'գտնուին առաւելապէս Թագաւորանիստ գաւառաց մէջ, ինչպէս են Արարատեան դաշտին, Արագածոտն և Շիրակ գաւառաց, զորս անձամբ տեսած ենք, այս տեղ Արարատեան նահանգի վրայ ընդհանուր տեղեկութիւն դնելով, նորա դիրքն և օդոց, լերանց ու գետոց. կ'դառնանք յիշեալ երեք գաւառաց մէջը եղած նախնեաց հոյակապ և աստուածաշէն շէնքերը և հնութեանց աւերակները տեղագրել. որք ամէն տեղ նշխար նշխար կեցած՝ հոյակապեան ազգիս մեծագործութեանց և աշխարհաշինութեանց մէկ մէկ անջնջելի յիշատակներ են աշխարհքի առջև, վկայք հայրենի փառաց առաւելապէս Հայաստանի անտերունջ ժամանակին.

Արարատեան նահանգը ունի ըստ Խորենացւոյն՝՝ Զամենայն պարարտութի՝՝. ՚ի շահս և ՚ի դարմանս մարդկան պիտոյից կենաց և փափկութե՛ և ըմափութեան դաշտս արգաւանդահողս, կ'վկայէ և Փարպեցին Ղազար ՚ի Թղթահամարն 17.

Նա ՚ի Թղթահամարն 19. կ'գրէ դարձեալ. "Բերէ յինքեան (Արարատ նահանգ) զօրինակ լիութեան ըստ բանի գըրոյն՝ երկրին Եգիպտացւոց և դրախտին Աստուծոյ... զդաշտս մեծատարածս և որսալիցս, զլերինս շուրջանակի գեղեցկանիստս և պարարտարօտս. զհոծեալս էրէովքն կճղակաբաժանիւք և որոճայնովքն և այլովք ևս բազմօք ընդ նոսին. յորոց ՚ի վերուստ ՚ի կատարածն՝ ջրոց հոսմունք անկարօտ ուղղման արբուցանելով զդաշտըս մատակարարէ անբաւ բազմութեամբ Ոստանն կանամբք և արամբք և ընտանեօք զանպակասութիւն հացի և գինւոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզանազանումն բուրաբուղխ սերմանցն" .

Ունի նաև շատ գետեր, որոց գլխաւորներն են Եփրատ և Երասխ. Մուրց, Ախուրեան Մեծամօր, Քասաղ, Հրազդան և Ազատ և Գառնւոյ գետ և Շա-

1274-54
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ անվան Публичная Библиотека

բուր․ որոց մէջ կ՚իջնեն լեռներէն շատ վտակներ, սոցա մէջ կ՚գտնուին տեսակ տեսակ ձկներ զանազանեալք համով ըստ Փարպեցւոյն.

Իսկ լեռների մէջ երևելիքն են Մասիս Հայոց ազգի հնութեանը հինաւուրց վկայ իւր անմահ անցից յիշատակներովը, երկրորդ խանձարուր մարդկային սերնդոց ջրհեղեղէն ետքը. Արագած լեռան երկրին մշտնջենաւոր բարութեան աղբիւր, նաև Շաղկունեաց և Կաղզուանու լեռները յՄշարունիս կամ յՆորախաձոր, երևելի իւր մայրագերան անտառով. և այլք.

Իրաւամբք կըկոչեն Խորենացին և Եղիշէ Արարատեան նահանգը՝ միջոց աշխարհի. և Փարպեցին՝ հոյակապ, հռչակաւոր և ականաւոր, մանաւանդ թէ՝ գըլուխ աշխարհաց հայոց.

Իսկ Խորենացին դարձեալ սեփհական բնակարան արքայի կոչելով զայն՝ կ՚գրէ, „Քանզի սովորութիւն էր արքայի միայն բնակիլ յԱյրարատ. վասն զի ազգիս նահապետութիւնը սկսելէն՝ այս եղաւ բնակութիւն Հայկայ սերնդոցը՝ Արմենակայ, Արամայիսայ, Շարայի, Ամասեայ Արամայ, Արայի և այլոց. յետ այնորիկ հայկազանց և Արշակունի թագաւորաց թագաւորութեան գահ. ետքը ևս նոյն թագաւորներին ձմերոց.

Ա ԴԻՐՔ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ.

Արարատեան նահանգը, որ քսան գաւառ իր մէջ կ՚պարունակէ, արևելքէն սահմանակից է Սիւնեաց, որ Գեղամայ լեռներովը կ՚բաժանուի. հիւսիսէն՝ Տայոց և Գուգարաց նահանգներուն, (որ են Ախալցխայու և Ղազախու կոչուած երկիրը). Արևմուտքէն՝ Տուրուբերանայ. (Մշու երկրին.) որ կ՚բաժանուի Բասենու արևմտեայ լեռներով, և հարաւէն՝ Վասպուրական գաւառն է, Վանայ երկիրը մինչև Երասխ.

Այս դիրքով Արարատեան նահանգի տրամագիծն է արևելքէն արևմուտք գըրեթէ՝ տասներկու աւուր ճանապարհ երկայնութիւն. իսկ լայնութիւնը հիւսիսէն հարաւ՝ վեց աւուր.

Հայաստանի բազմաշխատ հնախօսը Նոր հայաստանի մէջ Մեծն Հայաստանի հընգետասան աշխարհքը երեք մասն բաժանելով, կ՚դնէ զայն երեք տէրութեանց իշխանութեան տակ՝ օսմանցւոց, պարսից և վրաց. այժմեան Ռուսաց. որք սահմանակից են Հայաստանի, Այս ազգերը օսմանցիք և պարսիկք քառասուն տարի յառաջ հայոց աշխարհքը երեք բաժնած էին. իսկ Արարատեան նահանգը երկու բաժին եղած էր. արևմտեան բաժինը օսմանցւոց ձեռքն էր Բասէն գաւառէն մինչև Շիրակայ Ախուրեան գետը, Բագարանու և Կողպ գեղերու մէջ. Արևելեանը՝ պարսից, որ սիւնեաց արևմտեան

սահմաններէն կ՚սկսէր. և Վասպուրակա-
նի հարաւային արևմտեան կողմէն, հին
Նախիջևան քաղաքէն մինչև նոյն Ախու-
րեան գետը հարաւոյ կողմէն՝ Մասիս
լեռնէն և հիւսիսի կողմէն՝ Սևանայ ծո-
վէն սկսեալ Շիրակայ հարաւային ե-
զերքովը նոյնպէս մինչև Ախուրեանի խառ-
նուրդը Արաքսայ հետ՝ պարսից ձեռքն
էր մինչև Ռուսաց և պարսից պատերազ-
մը 1827. թուին. ինչ ժամանակ այս ընդ-
արձակ երկիրը Արարատեան դաշտովը մէկ
տեղ մեր օրհնաբանեալ տէրութեան
ձեռքն անցաւ, ինչպէս որ նշանակեցինք՝
մի և նոյն տեղերը սահմանագլուխ կար-
գելով յիշեալ երկու դրացի ազգաց հետ
այսինքն Արևմուտքէն Տաճկաց հետ Ա-
խուրեան գետը. իսկ հարաւային կողմէն՝
Արաքսը Պարսից հետ.

Եւ ըստորում արարատեան Նահան-
գի արևելեան կողմերը պատերազմէն յա-
ռաջ Ռուսաց ձեռքն էր, որպէս և հիւ-
սիսոյ կողմէն Գուգարաց և Տայոց Նա-
հանգի մէկ մասն, նոցա հետ երբ որ Ա-
րարատեան դաշտը, Արագածոտն և Մա-
սեացոտն գաւառները ևս վրաստանի հետ
միացուցին, բոլորը միատեղ կոչեցին՝
Ռուսաստան յայնկոյս Կաւկասու, և
մէկ կուսակալութիւն կազմելով, իրենց
սահմանադրութեամբ բաժանեցին քա-
ղաքական իշխանութեանց տակ.

Բայց մենք յիշեալ նահանգի գաւա-
ռաց նախնի բաժանմունքը չ՚շփոթելու
համար, մեր ազգային պատմագրաց ոճովը
իւրաքանչիւր գաւառաց հին անուանա-
կոչութիւնը կ՚պահենք, ցոյց տալով թէ
այժմ ինչ կոչմամբ է այս ինչ գաւառ.

ՕԴ ԱՐԱՐԱՏ ՆԱՀԱՆԳԻ.

Արարատեան նահանգի գաւառաց շատե-
րը լեռնային են, խոնաւէտ և շատաջուր.
ուստի և նոցա օդը մաքուր և բարեխա-
ռըն է քան դաշտային գաւառաց, ուր որ
փոփոխակար է օդը ամառ ժամանակ քան
թէ առողջարար. և ըստ այսմ լեռնագա-
ւառներուն մէջ ամառը աւելի պարզ և
ցուրտ է օդը, ինչպէս՝ Դարէն, Շիրակ.
Նիգատուն, Վարաժնունեաց, Աբեղենից
և Ճակատ գաւառներուն. որոց օդը ձմե-
ռը աւելի մեղմ է դաշտայիններէն նոցա
մէջ ձիւնը շարունակ տևելու համար մին-
չև Ապրիլ ամսոյ կէսը, առանց արեգա-
կան ներգործութեան.

Բայց դաշտային գաւառները՝ ինչպէս
են Արարատեան, Շարուրայ Արշարու-
նեաց, որ խոնարհ, ընդարձակ և տափա-
րակ ու շրջապատ լեռներու մէջ, ձմեռը
սովորաբար հիւսիսային հողմոց շնչելովը.
այնքան պարզ և ցուրտ կ՚լինի օդը, որ եր
կիրը տեղ տեղ կ՚պատառուի. ըստորում
հողմը ձիւնը կ՚սրբէ և երկիր ը գրեթէ
անծածկոյթ կ՚մնայ.

Այս ամենին մենք ականատես կ՚լինինք.
և յիշեալ տեղերի դաշտերը այնքան կը-
սառին ձմեռուայ սաստկութենէն. մին-
չև շատ տեղ ջուր չի գտնուելով.

ուզըր կ՚հալեն ու գործ կ՚ընեն ։

Իսկ թէ որ հիներուն հարցնենք. նո-
քա ևս այսինքն կ՚վկայեն. Խորենացին կ՚գրէ
Արարատեան դաշտի համար Երասխ
քաղաքին վրայօք. Անկարել ձմերայ-
նոյն ՚ի դառնահոտ փչմանէ հիւսիսոյ՝ պա-
ղեցեալ ձուլեալ փոակն, ոչ ուստեք ար-
բուցումն թագաւորականին գտանէր տե-
ղւոյ, Խոր. Բ. գիրք Գլ. ԼԹ ։

Արդէն բոլոր Հայաստան մէկ տեղ առ-
նելով. կ՚ասէ ընդարձակաուն բնակիչը
ձիւնեղէն լերանց ։

Խօղ զայս նոյն իսկ ազգիս Նահապե-
տութիւնը սկսելուն՝ Նեբրովդ կ՚յոխոր-
տար մեր Հայկայ վրայ, Խորենացւոյ ա-
սածին պէս. Բնակեցէր, ասէ, ՚ի մէջ
ցրտութեան սառնամանեաց՝ ։

Արարատեան նահանգի այս ցրտու-
թեան փորձն առին Գերջան գաւառի ժողովուր-
դը երբ որ այն տեղէց Արարատեան և
Սիւնեաց երկիրը գաղթեցին Լանկթամիր
բռնաւորի որդւոյն հրամանաւ. որ ժամա-
նակ ՚էին աւուրք դառնաշունչ և դժն-
դակ օդոյն ձմերայնոյ. և յետ երկուց ա-
ւուրց յանկարծակի ձիւն՝ սաստիկ եկն ՚ի
վերայ նոցա և ՚ի գիշերին յայնմիկ պաղե-
ցաւ ամենայն երկիրն. և բազում քրիստո-
նեայք պաղեալ մեռանէին, Թովմայ
պատմիչ ։

Շարունակելի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ճառ

՚Ի Տարեդարձ Ծննդեան Ն. Վ. Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ ։
Ընդհանրական Կաթողիկոսի ամենայն Հայոց։

Սրբազնասուրբ քահանայապետ

Աստուած ոչ զը մարգարէն դաւիթ ընդունարան
շնորհայն Աստուծոյ ՚ի տուչութիւնէ Հոգւոյն իմաս-
տից այնէ առ ժողովուրդն հոգևոր օրհնութեամբ
յ՝ փող հարէք ՚ի գլուխս ամսոց յաւուր նշանաւո-
րի տօնականաց մերոց։

Զինչ արդեօք այսու հոգեզուշան՝ մարգարէ
հնչէր ՚ի լսելիս ժողովրդեան Աստուծոյ եթէ ոչ զան-
կար ՚ի նոսա արդեօք զհոգևոր ուրախութիւն, բոր-
բոքել փողոյ երգել և տօնել զտարեկան աւուրց
նշանաւորութիւն. յիշեցուցանէր արդ արքեն Մարգարէն
սուրբ և զքանչելի եր խորհն Աստուծոյ, զմատակա-
րարեալն յար դէմեան ազգին ըստ անճառելի խոստման
իւրում, որ առ սուրբ և արդար նախապետսն այն
գի, զքանչելիս նորա ասեմ՝ զմեծամեծսն ՚ի փրկու-
թիւն ժողովրդեան.

Նա ոչ արդեօք նովին անբաւելի մարգարէու-
թեամբն իւրով փառաւորեալ Աստուած որպէս ըղ-
ձամօրէն այլինս, նոյնպէս և զազգս Հայոց ունի ընդ
պահպանութեամբ ամենայնի Ըզն իւրոյ, զարուց ի
դարս յայտնեալ զկեանս գոյութեան նորին, զհայ-
րապետական զհեղինակութիւնն, յոր նախա-
սահմանութեամբն իւրով ընտրեալ է զծեռդ մեր
Հայրապետ գլուխ ընդհանուր Եկեղեցւոյ, որ այսօր
զմեծ զայն երախտիսն Աստուծոյ ունելով և մեծապու-
ցանեմք որդիքս Ծննդեան տարեդարձի տօնի ա-
ւուր ըստ այնմ .. փող հարէք ՚ի գլուխս ամսոց յաւ-
ուր նշանաւորի տօնականաց մերոց.

Այս զմխիթարեցուցիչ ուրախութիւն. որ այժմ ծագ-
ի ՚ի դէմս սրբազանմօր համախմբելոց որդւոց Սիոնի
յայս հանդէս հոգևոր ցնծութեան. և երկրորդ
խորհուրդ, յոր կամեցայ մատուցանել զունկն մեր
բարձրագոյն փառաւորութեամբ առ Հայրն երկնա-
ւոր շնորհաբեր զաւակունք հօրդ հաստատեաց, փա-
ռաւորելով զփառաւորողն զՁեզ Հոգևոր վեհու-
թեամբ յանսպառ փեսայութիւն եկեղեցւոյ իւրոյ
որդոյ՝ պաճեար և փոխանորդ իւր կացուցանելով,
նա անիկ պանծալի փառաւորութեամբ այսօր ՚ի